ԱՂԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԹԱՇԵԱՆՑ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱԿԱՆՆ ԵՒ ԲԱՐԵԳՈՐԾԸ

—

Յիշողութիւններ՝ իր մահուան 20ամեակի առթիւ:

(Շարունակութիւն:)

Դ.

Մանթաշեանցի՝ քարիւղի արդիւնաբերութեան մէջ մտնելուն եւ հետեւաբար հարստութիւն դիզելուն սկզբնապատճառ է եղած իր ծանօթ մի հայ վաճառական, Միքայէլ Արամեանց: Այս վաճառականն, որ Ղուկասեան եղբայրների նման՝ Ղարաբաղցի էր, Բաքու էր գնացել գործ փնտռելու եւ նախ չաքարի տրանզիտի առեւտրով էր պարապւում. յետոյ իր երկու ուրիշ հայրենակիցների՝ Առաքել Ծատուրեանցի եւ Գերասիմ Թումայեանի հետ ընկերանալով նաւթի արդիւնաբերութեան էր ձեռնարկել: Այդ միջոցին, այս արդիւնաբերութեան հետ կապուած մի ուրիշ գործ եւս գրաւել էր Բաքուի հայ վաճառականներին: Այն ժամանակ՝ Բաթում-Բաքու երկաթուղային գծի շահագործումը դեռ եւս կառուցանող մասնաւոր ընկերութեան ձեռքումն էր եւ պետութիւնը դեռ չէր սեպհականացրած: Շահագործողներն իրենց յատուկ նաւթակիր վագոնները չունէին եւ վարձում էին ուրիշներից, շատ ձեռնտու պայմաններով: Ուստի այդպիսի վագոններ ունենալն եւ Երկաթուղու վարչութեան վարձու տալը շահաւէտ գործ էր դարձել, որովհետեւ Երկաթուղին իր փոխադրած նաւթային ապրանքի ամէն մի պուդին (16 կիլո) 2 կոպէկ վարձ էր տալիս, որով 3—4 տարուան մէջ վագոնի արժէքն մարւում էր եւ վագոնը ձրի մնում իր տիրոջը: Վագոն շինող Բալտիկեան ռուս գործարանատէրերը իրենց ներկայացուցիչն ունէին Բաքու, Ստէֆանինի անունով մի իտալացի, որ շատ նպաստաւոր պայմաններով ծախում էր այդ վագոնները: Նաւթային ձեռնարկութիւն ունեցող հայերը անմիջապէս օգտուեցան այս հանգամանքից եւ մեծ թուով վագոններ ձեռք բերին: Արամեանց եւ իր ընկերները նոյնպէս ուզեցին գնել, բայց իրենց ամբողջ ունեցած ինչպէս նաեւ պարտք առած դրամը գործածել էին հորեր փորելու վրայ, որ խնդրի էական մասն էր, եւ հնարաւորութիւն չունէին գնելու: Արամեանց յայտնում է իր ընկերներին, որ ինքը ճանաչում է Թիֆլիսում մի հայ վաճառական որ կարող է թէ պատրաստի դրամով նրանց ընկերանալ եւ թէ բանկի միջոցով վարկ բանալ նրանց համար: Ընկերները համաձայնում են եւ Արամեանց գալիս է Թիֆլիս ու դիմում է Աղեքսանդր Մանթաշեանցին: Մանթաշեանց, որ արդէն հետաքրքրւում էր նաւթային գործով, բայց դեռ առիթը չէր ներկայացել նրանով զբաղուելու, իսկոյն ընդունում է Արամեանցի առաջարկութիւնը, գալիս է նրա հետ Բաքու եւ պայմանաւորւում նրա եւ ընկերների հետ: Ամբողջ սկզբնական գումարն, որ Մանթաշեանց այս կերպով դրել է նաւթային գործի մէջ 50·000 ռուբլուց (£ 5000) աւելի չէր եւ այս չնչին գումարն էր, որ մի քանի տարի վերջը միլիոնների պիտի վերածուէր: Նոր ընկերութիւնը՝ Ծատուրեանց, Թումայեան, Արամեանց եւ Մանթաշեանց՝ ոչ միայն նաւթատար վագոններ գնեց, այլ եւ Մանթաշեանցի բացած բանկային վարկից օգտուելով ընդարձակեց իր գործը, նոր հորեր փորելով: Մանթաշեանցի նման հեռատես եւ ուշիմ վաճառականի համար դժուար չէր գուշակելը թէ նաւթային արդիւնաբերութիւնը ի՞նչ մեծ ապագայ էր խոստանում եւ նա ջանաց իր ընկերներին լիառատ վարձատրութեամբ գոհացընելով գործի միակ տէրը դառնալ: Այս կերպով նա հեռացրեց գործից Ծատուրեանցին եւ Թումայեանին եւ գնեց նրանց բաժինը. բայց Արամեանցի կողմից ընդդիմութեան պատահեց, որով նրանք մնացին ընկերներ Մանթաշեանց $^{3}/_{4}$ իսկ Արամեանց $^{1}/_{4}$ բաժնի տէր:

Մանթաշեանց՝ այնուհետեւ էլ շարունակեց բնակուել Թիֆլիսում. եւ որպէս զի բոլորովին ապահով լինի թէ իր բացակայութեան ժամանակ իր շահերը հաւատարմութեամբ կը պաշտպանուին, նա Բաքուի գործերի վրայ լիազօր կառավարիչ նշանակեց իր ազգական Գրիգոր Մանթաշեանցին: Բայց որովհետեւ սա շատ քիչ էր ծանօթ նաւթային արդիւնաբերութեան, ուստի յատկապէս այս գործին համար մի մասնագէտ եւս հրաւիրեց, Բաքուի առեւտրական եւ արդիւնաբերական շրջանների հետ ընդարձակ ծանօթութիւն ունեցող մի Ղարաբաղցի հայ, Արշակ Ոսկանեանց, որ պիտի ղեկավարէր արդիւնաբերութիւնը: Գործն այսպէս հիմնաւորելուց յետոյ, Մանթաշեանց հետզհետէ ընդարձակեց եւ ճիւղաւորեց իր նաւթային արդիւնաբերութիւնը, նորանոր հողեր ձեռք բերելով թէ պետական եւ թէ մասնաւոր սեպհականատէրերից եւ իր հորերի թիւն աւելացնելով, շատ նաւթ ստանալու համար: Հետաքրքրական է թէ երբեմն ինչպէ՞ս էին գտնում այդ նոր հորերը: Մանթաշեանց՝ Ունանեանի ընկերութեամբ գնում էր նաւթատեղին, շրջապատուած նաւթահորերի կառավարիչ հայ ճարտարագէտներով: Նա իր գաւազանը դնում էր մի տեղի վրայ եւ ասում, «այստեղ փորեցէք»: Ինչո՞ւ համար ա՛յդ տեղ եւ ոչ աւելի վեր կամ աւելի վար: Նա ոչ երկրաբանական մի ծանօթութիւն չունէր հողային շերտերի եւ ստորերկրեայ նաւթային խաւերի մասին. Նա առաջնորդւում էր պարզապէս իր բնազդից: Հորը փորում էին նրա մատնանշած տեղն եւ ահա նաւթը ժայթքում էր առատօրէն, դրացի հողատէրերի նախանձը շարժելով: «Այս մարդը բարի աստղի տակ է ծնուել» ասում էին ամէնքը:

Բաքուի նաւթարդիւնաբերողները 3 կարգի էին բաժանւում: Առաջինը նրանք, որոնք իրենց հորերից արտահանած հում նաւթը իրենք չէին զտում, այլ տեղն ու տեղը ծախում էին այս կամ այն մեծ գործարանատէրին: Երկրորդը՝ նրանք, որ իրենց նաւթը զտում էին իրենց գործարաններում եւ իրենց ստացած արդիւնքները, կէրօսին, եղեր եւ մազութը ծախում էին տեղն ու տեղը՝ այն արդիւնաբերական-առեւտրական մեծ տներին, որոնք իրենց ապրանքն արտածում, ուղարկում էին Ռուսաստան եւ արտասահման: Երրորդ խումբն, ոչ միայն իր սեպհական հորերի նաւթն այլ եւ ուրիշներից առած նաւթն էր զտում, ոչ միայն իր զտած ապրանքներն, այլ եւ ուրիշ գործարանների արտադրած արդիւնքներն էլ գնելով արտածում եւ ծախում էր արտաքին շուկաներում: Մանթաշեանց գտնւում էր այս երրորդ խմբի մէջ եւ առաջնակարգ տեղ էր գրաւում: Բայց որովհետեւ անձամբ կամ իր տրամադրութեամբն ոչ այնչափ արդիւնաբերող (industriell) էր, որչափ վաճառական, ուստի նրան հետաքրքրում էր առանձնապէս իր այդ մեծ ձեռնարկութեան առեւտրական մասը:

Առեւտուրը կայանում էր՝ նաւթային արդիւնքները նպաստաւոր պայմաններով ծախելու մէջ, մի մասը ռուսական շուկաներում, բայց մեծագոյն մասն արտասահմանում: Նա այս նպատակով իր սեպհական ճիւղերն ունէր թէ Ռուսաստանում եւ թէ Մերձաւոր Արեւելքում: Պատանեկութիւնից վարժ եւ ծանօթ լինելով եւրոպական հրապարակին, նրան առանձնապէս գրաւում էր այս վերջինը:

Ինչպէս արտասահմանի այնպէս եւ հարաւային Ռուսաստանի համար քարիւղի արդիւնքների արտածութեան նաւահանգիստը Բաթումն էր: Նովորոսիսկ շատ քիչ դեր էր խաղում, այն էլ միայն հեղուկ վիճակի մէջ բարձումների համար: Բաթումում ամէն տեսակ տեքնիքական յարմարութիւններ ստեղծուած էին այս նպատակի համար: Բաքուից նաւթուղու ճանապարհով կամ նաւթատար վագոններով ստացուած նաւթային արդիւնքները ամբարւում էին պետական (այսինքն Երկաթուղուն) եւ մասնաւոր անձերին պատկանող երկաթեայ մեծ րէզէրվուարներում (reservoir): Արտահանւում էին երկու կերպ. գլխաւորաբար հեղուկ ձեւով (наливом), այսինքն քարիւղը՝ ցամաքի րէզէրվուարներից յատուկ խողովակների միջոցով պարպւում էին նաւթատար շոգենաւերի մէջ, ուր դրա համար զետեղուած էին յատուկ երկաթեայ չանմարաններ: Երկրորդ ձեւն էր ամաններով, այն է տակառների եւ սնտուկների մէջ արտածելն. այս վերջինն ամէնից բարդն էր եւ ամէնից աւելի խնամք, հետեւաբար եւ աւելի մեծ ծախք էր պահանջում:

Ամէն մի սնտուկ՝ երկու թիթեղեայ (fer blanc) աման (bidon) ունէր, որոնց պատրաստութեան համար ընդարձակ գործարաններ կային: Ամէնից մեծ եւ ամէնից կատարելագործուած գործարանը Բնիտօյինն (Ռոչիլդ) էր: Ռոչիլդից անմիջապէս վերջը գալիս էր Մանթաշեանց, ապա երկու ուրիշ հայ, Ծովեանեան եւ Խաչատրեանց, մի յոյն՝ Արվանիթիդիս-Սիդէրիդիս եւ մի եւրոպական տուն՝ Ռիխնէր եւ Ընկ.: Թողնում եմ մի քանի մանրները, որոնք գլխաւորաբար հայ էին եւ մասնաւորապէս տակառներ շինելով էին զբաղած: Ամենամեծ նաւթարդիւնաբերող ընկերութիւնը, Նոբէլը, սնտուկների համար գործարան չունէր եւ արտահանում էր մեծ քանակութեամբ հեղուկ վիճակի մէջ եւ տակառներով: Միայն վերջին տարիները, նա սնտուկների արտահանութեան եւս ձեռնար-

© National Library of Armenia

կեց, բայց դրա համար նա աւելորդ համա-
րեց գործարան շինել, այլ պայմանաւորուեց
Խաչատրեանցի հետ, որին հայթայթում էր
հարկ եղած նիւթերը եւ Խաչատրեանց յանձ-
նում էր պատրաստի սնտուկներ թիթեղեայ
ամաններով:

Մանթաշեանց՝ իր գործարանը շինելուց
յետոյ, չբաւականացաւ միայն ամաններով,
այսինքն սնտուկով եւ տակառներով արտա-
ծելով, այլ Նոբէլի եւ Ռոչիլդի նման՝ սկսեց
նաեւ հեղուկ վիճակի մէջ կէրօսին եւ եղեր
արտածել թէ արտասահման եւ թէ հարա-
ւային Ռուսաստան, յատկապէս Օդէսա, ուր
ընդարձակ պահեստատեղի էր կառուցած:
Միեւնոյն ժամանակ իբրեւ ձեռնարկու եւ
խիզախ վաճառական, նա հետզհետէ հիմնեց
արտասահմանում իր յատուկ մասնաճիւղերը
բոլոր այն տեղերում, ուր ռուսական կէրօ-
սինի պահանջ կար: Ամենամօտ եւ ամենա-
նպաստաւոր շուկաները Մերձաւոր Արեւել-
քումն էին, ուստի նա գործակալներ ուղար-
կեց — Կ. Պոլիս՝ (Համբ. Ծխեանցին),
Եգիպտոս՝ (Յովհ. Մուշեղեանցին) եւ Սա-
լօնիք (Թէոդ. Փարէմուզեանցին), որոնք այդ
տեղերում «Մանթաշէվ» անուան գրասենեակ-
ներ բացին, պահեստատեղիներ վարձեցին եւ
այլ հարկ եղածը գործադրեցին նրա ապրանքը
սպառելու համար: Վարձուած նոր պաշտօ-
նեաները տեղացի հայեր էին, ընդհանրապէս:
Բայց միայն ճիւղեր հաստատելը բաւական
չէր, պէտք էր ապրանք հասցնել նրանց՝
արագ եւ աժան: Ուստի Մանթաշեանց գնեց
մի առագաստանաւ եւ երկու շոգենաւ, որ-
պէս զի առանց որ եւ է արգելքի անընդհատ
ապրանք ուղարկէ, առանց օտար նաւերին
կարօտ լինելու, որչափ այդ հնար էր, որով-
հետեւ երբ իր սպառումն աւելցաւ, մանա-
ւանդ երբ սկսեց ամբողջ նաւբեռներ ծախել
ծայրագոյն Արեւելքի (Հնդկաստան, Չինաս-
տան եւ Ճապոնիա) համար, բնականաբար
օտար մեծ շոգենաւեր հարկ եղաւ վարձել:

Բարիւղի առեւտրի համար առաջնակարգ
կարեւորութիւն ունէր Լոնդոնը եւ Մանթա-
շեանցի առաջին գործերից մէկն եղաւ այն-
տեղ իր սեպհական գրասենեակն հաստատել,
գործակատար կարգելով Յովհ. Ջիգեանեան-
ցին: Կանխեմ ասել, որ երբ պաշտօնեաներ էր
ընդունում, Մանթաշեանց երկու կարգի ան-
ձերին նախապատուութիւն էր տալիս. պա-
տասխանատու բարձր պաշտօն էր յանձնում
կա՛մ նրանց, որոնք բարձր ուսում ունէին եւ
լեզուագէտ էին եւ կամ նրանց, որոնք նոյն
իսկ միջնակարգ ուսում չունէին, բայց փոր-
ձուած եւ վստահելի վաճառականներ էին:

Վերոյիշեալ 4 ներկայացուցիչներից եր-
կուսը համալսարանական էին եւ լեզուագէտ
(Մուշեղեանց եւ Ջիգեանեանց), իսկ միւս
երկուսը՝ պարզ մարդիկ, որոնք վաղուց,
Մանթաշեանցի ձեռքի տակ, առեւտրի մէջ
մարզուած էին: Այս սկզբունքին հետեւելով
նա այնուհետեւ հարիւրաւոր այդպիսի պաշ-
տօնեաներ ունեցաւ իր ձեռքի տակ: Սրանց
մէջ միայն մէկը գտնուեց, որ ի չարը գործ
դրեց նրա վստահութիւնը[1]: Մանթաշեանցի
բոլոր գործակատարները եռանդով փարած
էին իրենց պաշտօնին: Բաթումի գրասենեա-
կում մի հասարակ պաշտօնեայ կար, որ փող
էր բաժանում Բանուորներին: Աւետիս Լա-
լայեանց, այս էր նրա անունը, մի երեկոյ
գրասենեակում մի խոշոր գումար ստանա-
լով գնում էր գործարան, շաբաթական հա-
շիւը կարգադրելու: Յանկարծ երեք հոգի
ճանապարհին յարձակւում են նրա վրայ եւ
աշխատում են կողոպտել, դաշոյնով սպառ-
նալով: Լալայեանց պառկում է գետնի վրայ,
փողի տոպրակը ամուր բռնած իր փորի տակը
եւ գոռում, կանչում է թէ «եթէ սպանեն էլ
նա իր «խազայինի» (= տիրոջ, այսինքն
Մանթաշեանցի) փողը չի՛ տայ ուրիշին»:

[1] Այս երիտասարդն (այսինքն այն ժամանակ երի-
տասարդ էր), որի անունը չեմ տալիս, որովհետեւ
նա դեռ կենդանի է, Ռուսաստանի մի մեծ կենդրոնա-
կան քաղաքում Մանթաշեանցի մասնաճիւղի կառա-
վարիչն էր: Նա զոհ գնալով իր խաղամոլութեան,
սովորել էր իրեն վստահուած գումարներից վճարել
թղթախաղում կորցրած փողերը: Տեսնելով, որ այդ
մասնաճիւղի վրայ մեծ գումար կայ, հարիւր հազար-
ներ, իսկ այնտեղից փող չէ ստացւում, Թիֆլիսից
քննիչ ուղարկուեց, որ երեւան հանեց կատարուած
զեղծումն եւ զեկուցեց կենդրոնական վարչութեան:
Զեղծարարն զգալով իր յանցանքը, անմիջապէս վա-
զել էր Պարիզ, ուր գտնւում էր այն միջոցին Ման-
թաշեանցն եւ սրա ոտքն ընկնելով աղաչել էր, որ
ներէ նրան: — Մանթաշեանց իր բնածին բարեսրտու-
թեամբը ներեց նրան, հայրական խրատներ տալով եւ
զեղծարարը նրա նամակով եկաւ Թիֆլիս: Մանթա-
շեանց այդ նամակի մէջ պատուիրում էր մեզ, կեն-
դրոնական վարիչներիս, որ ոչ միայն արդարութեան
ձեռքը չյանձնենք թշուառ երիտասարդին, այլ նոյն
իսկ հրապարակ չհանենք նրա կատարած զեղծումն,
որպէս զի նրա պատիւը չխախտուի եւ նա կարողանայ
ուղղուիլ եւ դարձեալ աշխատանքի ասպարէզ ունե-
նայ: Այդպէս էլ եղաւ: Ես յիշում եմ թէ ինչպէս նա
զղջացած էր եւ երախտապարտ, երբ եկաւ իմ տունս
Թիֆլիս, եւ երդմամբ խոստացաւ, որ Մանթաշեանցի
բարիքը չի մոռանայ եւ այլ եւս չի խաղար: Դէպքը
անծանօթ մնաց օտարների համար: Տարիներ վերջը ես
նրան պատահեցայ Պետերբուրգում, ուր մի ուրիշի
քով հաւատարմութեամբ կատարում էր իր նոր պաշ-
տօնը:

Այս գոռում գոչումի վրայ գործարանից
մարդիկ են դուրս գալիս եւ աւազակները
փախչում են ձեռնունայն:

Ի սկզբան երբ գործերը մեծ ծաւալ չէին
առած եւ գործակատարների թիւը մեծ չէր,
Մանթաշեանց իր բոլոր առեւտրական նա-
մակները անձամբ էր գրում, ոմանց հայերէն
ոմանց ռուսերէս եւ ոմանց էլ վրացերէն:
Վրացերէն գրում էր նրանց, որոնք իրեն
նման Վրաստանցի էին եւ վրացերէնը խօսում
եւ գրում էին իբրեւ մայրենի լեզու: Ռուսե-
րէն գրում էր այն գործակատարներին,
որոնք ռուսական բարձրագոյն դպրոցներում
էին աւարտել եւ միայն այս լեզուով կարող
էին թղթակցել: Բայց եթէ մէկը հայերէն
գիտէր, նա միշտ նրա հետ հայերէն էր
թղթակցում, մանաւանդ որ ինքը ամէնից
լաւ հայերէն էր կամենում գրել:

Մանթաշեանց՝ ամէնից աւելի կարեւո-
րութիւն էր տալիս իր Լոնդոնի մասնաճիւ-
ղին, որովհետեւ նրա վրայ մեծ պարտակա-
նութիւններ էին դրուած եւ խօք էլ մեծ
գործունէութիւն էր ցոյց տալիս: Այսպէս՝
1. Բաթումի սնտուկի գործարանի համար
պէտք եղած թիթեղը (tin plate), որ միայն
Անգլիայից էր գալիս եւ մեծ քանակութեամբ
էր սպառւում, Լոնդոնի ներկայացուցիչը
առնում էր բուն աղբիւրներից, առանց միջ-
նորդների դիմելու, համեմատաբար աւելի
նպաստաւոր պայմաններով: 2. Նա ծախում
էր ամբողջ նաւբեռներով կէրօսին կամ գանա-
զան եղեր, այն տեղերի համար, ուր Ման-
թաշեանց իր սեպհական տունը չունէր:
3. Վարձում էր օտար նաւեր, երբ Մանթա-
շեանցի նաւերը չէին բաւականանում թէ՛ իր
մասնաճիւղերին եւ թէ ուրիշ տեղեր ապրանք
հասցնելու եւ այլն: Մանթաշեանց շատ քիչ
անգամ ինքն անձամբ Լոնդոն էր գնում...,
որովհետեւ նա սաստիկ վախենում էր ծո-
վից եւ անմիջապէս ծովախտով բռնւում,
ուստի շատ շատ Պարիս էր կանչում իր այն-
տեղի ներկայացուցչին:

Արտասահմանի մեծ շուկաներում Ման-
թաշեանցի ցոյց տուած տենդային գործու-
նէութիւնը խիստ անհանգստութիւն էր պատ-
ճառել ոչ միայն ամերիկական եւ անգլիական
ընկերութիւններին, որոնք չէին սպասում այդպիսի մըր-
ցում որ եւ է Կովկասցի վաճառականի կող-
մից, այլ նաեւ Նոբէլին եւ Ռոչիլդին, ուստի
սրանք էլ ամէն տեղ աշխատում էին վնասել
նրան: Բայց Մանթաշեանց փոխանակ վհա-
տելու, աւելի եւս եռանդով եւ թափով յա-
ռաջ էր տանում իր գործը: Իր կրած վնաս-
ները՝ այդ մեծ մրցումից, անշուշտ զգալի
էին, բայց նա իբրեւ հեռատես վաճառական
անհրաժեշտ էր համարում ժամանակաւորա-
պէս կորուստներ ունենալ, իր «մարկան»
ճանչցնելու եւ իր առեւտրական տան ապա-
գան ապահովելու համար:

Եւ նա չսխալուեց: Իր մրցակիցները՝
տեսնելով, որ անկարող էին Մանթաշեանցի
ոչ տնտեսական ոյժն եւ ոչ մանաւանդ նրա
անսպառ եռանդը խորտակել, ուրիշ միջոցի
դիմեցին: Այն հանգամանքն, որ ռուսական
քարիւղի մեծ արտադրողները արտասահմա-
նեան շուկաներում իրար հետ մրցելով, գները
կոտրում էին, ազդում էր նաեւ Բաքուի տե-
ղական գների վրայ, որից վնասւում էին ընդ-
հանրապէս բոլոր նաւթարդիւնաբերողները:
Ուստի՝ ռուսական կառավարութեան միջա-
մտութեամբ, սրանք՝ հարկադրուեցան իրենց
մէջ որոշ համաձայնութեան գալ եւ 1895ին
Բաքուի մէջ մի նոր Միութիւն ստեղծեցին,
որի նպատակն էր կանոնաւորել ռուսական
քարիւղի արտածութիւնն եւ արտասահմանի
վաճառումները: Այս Միութիւնն ունէր Բա-
քու իր վարչական Խորհուրդը 14 անդամից
բաղկացած, որ պիտի ղեկավարէր ամբողջ
գործն եւ հրահանգ տար իր գործակալներին,
որոնց ձեռքում միայն պիտի գտնուէր ար-
տասահմանեան առեւտուրը: Գործակալներ
կամ Միութեան Լիազօրներ ընտրուեցան Նո-
բէլ, Ռոչիլդ[2] եւ Մանթաշեանց, որոնք պար-

[2] Այդ տարին Մանթաշեանց պատահմամբ ծանօ-
թացել էր Պարիսի Ռոչիլդի հետ, որ ինչպէս արդէն
յիշած եմ Բաքու-Բաթում՝ Բնիտօ համառօտութեան
տակ գործող արդիւնաբերութեան եւ առեւտրի մեծ
ընկերութեան բոլոր ակցիաների տէրն էր: Այս Ընկե-
րութեան բուն անունն էր՝ «Կասպից-Սեւծովեան ըն-
կերութիւն» (Каспійско-черноморское общество):
Մանթաշեանց, Վիեննայից Պարիս էր գնում, երբ գտնուած
վագոնի մէջ հանդիպում է մի եղակի ճանապարհորդի,
որ իրեն շատ հեռու է պահում բոլորից եւ մեծ զգու-
շութիւններ գործ դնում: Մանթաշեանց, որ շատ ըն-
կերական (sociable) բնաւորութիւն ունէր, աշխա-
տում է խօսել նրա հետ, բայց չէ յաջողում: Օտարա-
կանն այն ժամանակ հարցնում է նրան թէ ո՞րտեղից
է գալիս: Մանթաշեանց պատասխանում է՝ Կովկասից
եւ պարապւում է քարիւղի գործով: Օտարականն ա-
սում է թէ ինքը անունով ճանաչում է Կովկասից
միայն մի հայ՝ Mantacheff անունով, որ մեծ գործեր
է կատարում քարիւղի վրայ, բայց նրան երբեք չէ
հանդիպած: «Այդ ես եմ» պատասխանում է Մանթա-
շեանց եւ սպասում է, որ դիմացինն էլ իր ո՞վ լինելը
յայտնէ, բայց նա յամառութեամբ լռում է: Երբ հաս-
նում են Պարիս, մի ծառայ մտնում է, առնում է օտա-
րականի իրերը, տանում դնում է մի փառաւոր կառքի
վրայ եւ օտարականը նրան ողջունելով հեռանում է:

© National Library of Armenia

տաւորուած էին համաձայնութեամբ գործել եւ գները պահպանել արտասահմանեան շուկաներում: Նաւթարդիւնաբերողների այս Միութիւնը Բաթումում հաստատեց իր առանձին գրասենեակը, բազմաթիւ պաշտօնեաներով, վերոյիշեալ 3 մեծ տների Բաթումի ներկայացուցիչների ղեկավարութեան տակ, որ պիտի հսկէր արտածութեան գործի վրայ: Այնտեղ էին կենդրոնացած արտասահմանի վերաբերեալ բոլոր գործողութիւնները եւ այդ 3 գործակալների փոխադարձ հաշիւները: Սակայն զանազան հանգամանքների շնորհիւ այս համաձայնութիւնը երկար չտեւեց եւ վերոգրեալ 3 մեծ արտածողները վերստացան իրենց գործելու ազատութիւնը:

Մանթաշեանցի գլխաւոր խորհրդականն եւ ամենամօտ անձնաւորութիւնը Դաւիթ Խաբազեանցն էր, իր մօրեղբօրորդին եւ քենեկալը, որ իր տղայութեան հասակից նրա հաւատարիմ պաշտօնեան էր եղած: Խարազեանց՝ Մանթաշեանցի յաճախակի եւ երկարատեւ բացակայութիւնների ժամանակ նրա բոլոր անձնական եւ առեւտրական գործերի լիազօրն էր, թէ իր սեպհական առեւտրական տան մէջ եւ թէ այն բոլոր բանկային եւ այլ առեւտրական ընկերութիւնների մէջ, ուր Մանթաշեանց մեծ բաժնետէր էր: Մանթաշեանց միշտ ուշադրութեամբ լսում էր, երբ նրան խորհուրդներ էին տալիս. նոյն իսկ ընդդիմախօսութիւնը նրան ամենեւին տհաճութիւն չէր պատճառում: Բայց երբ որ եւ է խնդրի վրայ իր սեպհական համոզումն էր գոյացրել եւ որոշում տուել, այլ եւս անկարելի էր նրա միտքը փոխել տալ: Պատահում էր, որ Խարազեանց եւ երբեմն ես էլ նրա հետ, աշխատում էինք համոզել որ իր որոշումը փոխէ. նա հանդարտութեամբ լսում էր մեր պատճառաբանութիւնը եւ այնուամենայնիւ մեզ պատասխանում էր — «գուցէ ձեր ասածը ճիշդ է. բայց ես այսպէս ե՛մ կամենում». հարցը վճռուած էր այս կերպով. այլ եւս ընդդիմախօսել աւելորդ էր դառնում:

Մանթաշեանց մոռացել էր այս հանդիպումն երբ երկու օր վերջը մի ծրար է ստանում, որի մէջ կար Բոշիլդի այցետոմսն եւ Մեծ Օպէրայում իր սեպհական բազկաթոռի տոմսակը: Այդ ժամանակ միայն նա հասկանում է թէ ո՛վ էր իր անունը յայտնել չուզող ուղեկիցը: Երբ նա հետեւեալ օրը գնում է Բոշիլդի գրասենեակը, շնորհակալութիւն յայտնելու թատրոնական տոմսակի համար, նրան երկար հարցափորձից յետոյ միայն թողնում են, որ Բոշիլդի սենեակը մտնէ եւ հետը տեսնուի: Այնուհետեւ նրանք բարեկամացան եւ յիշում եմ, որ Մանթաշեանց նրան միշտ Թիֆլիսից, Կովկասի հանրածանօթ «Աստուածային ձկնորսարան»ի խավեար էր ուղարկում Պարիս:

1897ին մի կարեւոր փոփոխութիւն տեղի ունեցաւ: Միքայէլ Արամեանց, որ ինչպէս գիտենք Մանթաշեանցի Բաքուի գործերի եւ Ռուսաստանի առեւտրի $^{1}/_{4}$ բաժնի տէրն էր, սկսել էր անհանգստանալ նրա արտաքին առեւտրի գտած ծաւալումից. ծախուած ապրանքը Բաքուի իրենց ընդհանուր ձեռնարկութեան արդիւնքն էր եւ այս պատճառով երբեմն հաշիւների մէջ թիւրիմացութիւններ էր տեղի ունենում: Արամեանց քանիցս խնդրել էր, որ արտասահմանեան առեւտրի մէջ էլ իրեն բաժին տայ, եւ այսպէս մի ընդհանուր հաշիւ ունենան, բայց Մանթաշեանց չէր համաձայնում: Մի օր Արամեանց նրան մի խօսք ասաց՝ — «Աղեքսանդր, մի մոռանայ, որ ես եմ եղած պատճառ քո Բաքու գալուն»: Մանթաշեանց այդ խօսքի վրայ մի րոպէ կանգ առաւ եւ ապա պատասխանեց. «Միքէլ ջա՛ն, դրուստ (ճիշդ) ես ասում». իր ընդդիմութիւնը վերջացած էր: Գիտնալով Մանթաշեանցի ուժեղ կամքն, Արամեանց ընդունեց, որ Մանթաշեանց ըստ առաջնոյն վարէ իր արտաքին առեւտրի գործը, ինչպէս ինքը յարմար տեսնէ: Ըստ այնմ կազմուեց նոր առեւտրական պայմանագիր, որի համաձայն այնուհետեւ գործը շարունակուեց՝ «Ա. Մանթաշեանց եւ Ընկ. Առեւտրական Տուն» (Торговый дом А. Манташев и Ко), տիտղոսով, որի դրամագլուխն որոշուած էր 3 միլիոն ռուբլի (= £ 300·000): Այսչափ էր գնահատւում Բաքուն իր հանքերով եւ գործարաններովը, Բաթումի գործարանը, շոգենաւերը, եւ արտասահմանեան ճիւղերը բոլորը միասին: Այդ դրամագլխի $^{4}/_{5}$ը Մանթաշեանցինն էր իսկ $^{1}/_{5}$ը Արամեանցին: Այս պայմանագրից յետոյ Արամեանց համարեա թէ քաշուեց գործից. նա այլ եւս շատ քիչ էր գալիս դրասենեակ: Նա ապրում էր Բաքու, ուր շատ շքեղ տուն էր կառուցել իր համար, որի մի մասում ինքն էր բնակւում, իսկ միւս յարկաբաժիններում Բաքուի յայտնի հարուստ ընտանիքներ: Իսկ 1904ին նա այդ տունն էլ ծախեց եւ բոլորովին տեղափոխուեց Թիֆլիս: Եղաւ մի ժամանակ երբ նաւթային արդիւնաբերութիւնը ճգնաժամ ունեցաւ, գների անկումի հետեւանքով: Արամեանց, որ արդէն դժգոհ էր որ Մանթաշեանց նրան չէր

թողնում գործերի մէջ ազդու մասնակցութիւն ունենալու, յաջողեցաւ համոզել Մանթաշեանցին եւ իր ունեցած $^{1}/_{5}$ բաժինն էլ ամբողջապէս ծախեց նրան եւ այլ եւս լսել չէր ուզում նաւթի եւ առեւտրի մասին: Նրա կարողութիւնն անցնում էր 10,000·000 ռուբլուց եւ նա որոշել էր այդ մեծ հարստութիւնը հաստատուն եկամուտի աղբիւրի վերածելով այլ եւս հանգիստ ապրել, թէեւ նա դեռ 60 տարեկան էլ չկար: Արամեանց Թիֆլիսում մի գեղեցիկ տուն գնեց իր բնակութեան համար եւ ապա մի շարք եկամտաբեր շինութիւններ կառուցեց: Բացի դրանից նա ակամայ կամօք տէր դարձաւ մի ընդարձակ գիւղատնտեսական կալուածքի, ուր մեծ ամառանոց շինելով, ամառներն իր ամբողջ ընտանիքով այնտեղ էր ապրում[3]:

Արամեանց նոյնպէս բարեգործութիւններ ունի կատարած: Թիֆլիսում նա շինել տուեց մի ընդհանուր քաղաքային հիւանդանոց, որ իր անունով կոչւում էր «Արամեանցի Հիւանդանոց»: Նա ունէր նաեւ իր թոշակաւոր ուսանողները: Երբ 1913ին Շուշի քաղաքի թեմական դպրանոցը տօնում էր իր հիմնարկութեան 75ամեակը, Արամեանց, որ Շուշեցի էր, իր հօրենական տունը նուիրեց դպրանոցին: Այդ միջոցին՝ Բաքուի հարստացած ուրիշ շուշեցիներ եւս առատօրէն նուիրատուութեամբ մասնակցեցան այդ յոբելեանին: Ի մէջ այլոց նրանցից մէկը, Բաղդասար Արզումանեան 200·000 ռուբլի

[3] Այս կալուածքն ունի իր հետաքրքրական պատմութիւնն: Կալուածքը գտնւում էր Թիֆլիս—Երեւանեան երկաթուղու գծի վրայ, Ախթալա կայարանին մօտ: Նրա տէրն էր հին վրացական ազնուական գերդաստաններից իշխան Բ., որ իր անհաշիւ ծախքերին գոհացում տալու համար գրաւ էր դրել Պետական Հողային բանկում: Տարիների ընթացքում բանկի պարտքի նոյն իսկ տոկոսը վճարել չկարողանալով կալուածքը աճուրդով ծախուելու վտանգի մէջ էր: Իշխան Բ. դիմում է, որից ազատուելու համար փոխ առնում է Արամեանցից եւ նրանից մի մեծ գումար գրաւ դնելով, կալուածքն երկրորդ անգամ գրաւ իշխանն այդ Արամեանցի մօտ: Բայց ծախսարար վրացի իշխանը տոկոսները կանխիկ դրամն էլ հալեցնում է եւ բանկի տոկոսները չէ վճարում, որով պետական բանկն այս անգամ ըստ օրինի աճուրդի է հանում կալուածքը: Որպէս զի իր տուած ստակը չկորսուի, աճուրդի ժամանակ Արամեանց վճարում է բանկի յետամնաց տոկոսները, ընդունում է իր վրայ բանկի ամբողջ հաշուի կարգադրութիւնը եւ այդպէսով միակ տէր դառնում այդ իշխանական կալուածքին, որ մեծ դղրդում եւ անհանգստութիւն է պատճառում Վրաց ազնուական շրջաններին: Մինչ այդ՝ արդէն հայ դրամատէրերը տիրել էին վրաց զանազան իշխանական գոյքին. Մանթաշեանց գնել էր Թիֆլիսի կենդրոնում՝ արքայական զարմին պատկանող տունն, ուր այժմ տեղաւորուած էր գլխաւորաբար հայ առեւտրականների յաճախած «Թիֆլիսի Ակումբը» (Тифлисское Собраніе): Վրաց վերջին թագաւորի ժառանգի թոռները կարօտութիւնից դրդուած ծախել էին իրենց հօրենական տունն, որ գնել էր Բաքուեցի մի հայ, նախկին նաւթարդիւնաբերող (ի մէջ այլոց ես էլ Թիֆլիսում, այդ տան մէջ էի բնակւում) եւ այսպէս բազմաթիւ օրինակներ: Վրացիք գանգատւում էին թէ այս ձեւով տնտեսապէս վրացիք «վաչխառութեամբ» ճնշում էին կառավարչապետեան ներին...: Այդ ժամանակ Կովկասի հայատեցութեան ... էր իշխան Գոլիցին, որին, իր սաստիկ հայատեցութեանը պատճառով հայ հնչակեանները, յետոյ պիտի յանգէր նրա վիրաւորէին դաշոյններով, եւ որ պիտի թէ իշխան Կովկասից հեռանալուն: Գոլիցին լսելով թէ իշխան Բ.ի մեծ կալուածքը նոյնպէս հայի ձեռքն է ընկել, մարդ է ուղարկում հրամայելով, որ կալուածքը ետ տայ վրացի իշխանին, կամ իր բուն արժէքին համաձայն (գնահատւում էր երկու անգամ աւելի քան Արամեանց վճարել էր) նոր գումար եւս վճարէ Բ.ին: Ռուսական օրէնքի վրայ հիմնուելով, որի առջեւ բոլորն էլ հաւասար են, նա պատասխանում է թէ մտադիր չէ ո՛չ վերադարձնել կալուածքը, ո՛չ էլ նոր վճարում կատարել, բայց խոստանում է, որ այն օրն որ իշխան Բ. կը բերէ իրեն՝ իր ծախսած ամբողջ գումարը, նա անմիջապէս կը յանձնէ նրան իր կալուածքը: Այս օրինաւոր եւ կտրուկ պատասխանի վրայ Գոլիցին եւ վրացի ազնուականները լռել էին: Արամեանց մնում է կալուածքի տէրը: Այնուհետեւ նրա առաջին գործն է լինում մտցնել այնտեղ արդիւնաբեր տնտեսութիւն: Նա հրաւիրում եւ տեղաւորում է տասնեակներով տաճկահայ գաղթական ընտանիքներ, ի բնէ երկրագործ, որոնք սկսում են եռանդով մշակել այն կալուածքը, որ մինչեւ այն ատեն խոպան էր մնացած, եւ որն երկու տարի վերջը, հաստատուն եկամուտ է բերում: Բայց խնդիրը դրանով չի վերջանում: Այս կալուածքի սահմանների մէջ էր գտնւում Հնօրեայ հռչակաւոր Հաղբատի վանքը, որ ունէր իր արտերն ու հողերը, որոնք վրացի իշխանը գրաւել էր եւ ետ չէր տալիս: Հայ Հոգեւոր իշխանութիւնը դատ էր բացել այս պատճառով իշխ. Բ.ի դէմ, որ տարիներից ի վեր քաշքշւում էր: Կալուածքի հետ միասին այս դատն էլ փոխանցւում էր Արամեանցին, որ այս բանից ամենեւին տեղեկութիւն չունէր: Ուստի Թիֆլիսի Առաջնորդը՝ Էջմիածնից ստացած հրահանգի համաձայն պատշաճ էր համարել մի պատգամաւորութեան միջոցով Արամեանցի ուշադրութիւնը հրաւիրել այս հանգամանքի վրայ, նախ քան նրա դէմ դատը վերսկսելը: Պատգամաւորներն էին «Մշակ»ի խմբագիր Ալ. Քալանթար (Գր. Արծրունու յաջորդը), Հոգեւոր իշխանութեան փաստաբանը՝ Յովհ. Սպենդիարեան եւ մի հայ ճարտարապետ: Սրանք անձամբ չէին ճանաչում Արամեանցին, բայց իմ բարեկամներն լինելով, խնդրեցին, որ ես ընկերանամ նրանց եւ միջնորդ հանդիսանամ Հոգեւոր իշխանութեան եւ Արամեանցի մէջ, դատը խաղաղութեամբ վերջացնելու: Ես համաձայնութիւնս յայտնեցի եւ պատգամաւորութեան ուղեկցեցայ մինչեւ Ախթալա, ուր գտնւում էր Արամեանց եւ որին կանխապէս լուր էի ուղարկել մեր գալու մասին: Արամեանց ինձ հարցրեց թէ ինչ էր նրանց գալու նպատակը: Ես երկու խօսքով պարզեցի: Արամեանց որ ինձ հետ միշտ դու-ով էր խօսում, պատասխանեց. «Առաքել, դու նրանց ասա, որ ինձ ոչինչ չասեն, ինչպէս որ Սինոդն ուզում է, այնպէս կ'անեմ»: Ես յայտնեցի այս պատասխանը պատգամաւորներին, որոնք շատ լաւ հիւրասիրուելուց յետոյ, առանց Արամեանցի հետ գործի մասին խօսելու՝ հեռացան: Արամեանց կատարեց իր խոստումը. ոչ միայն վերադարձրեց Հաղբատի վանքի 500 դեսեատին հողն, այլ եւ այնտեղ դպրոց հիմնեց, թէ շրջակայ հայ գիւղացիների եւ թէ իր կալուածքի տաճկահայ մշակների երեխաների համար: Էջմիածնի Սինոդը լիովին գոհացում ստանալով 1907 Ապրիլին դադարեցրեց դատը: Իմ միջնորդութեան համար էլ Թիֆլիսի Թեմական Առաջնորդ Սաթունեան սրբազան շնորհակալութեան գիր էր ուղարկել ինձ:

© National Library of Armenia

նուիրեց, երբ թեմական դպրանոցի հիմնադրամ:

Արամեանց Թիֆլիսում աջակցում էր նաեւ ազգային կրթական ընկերութիւններին թէ դրամական նպաստով եւ թէ իր անձնական մասնակցութեամբ: Նա՝ «Հայոց Ազգագրական Ընկերութեան» վարչութեան եռանդուն անդամներից մէկն էր: Նա վախճանուեց 1922ին Թիֆլիսում, իբրեւ չքաւոր, խեղճ եւ թշուառ վիճակի մէջ· ռուսական բոլշեվիքական յեղափոխութիւնը զրկել էր նրան իր բոլոր կայքերն ու գոյքերը...:

(Տարռեմակեղի:) ՍԱՐՈՒԽԱՆ

P. CHRYSOSTOMUS BAUR, Der heil. Johannes Chrysostomus und seine Zeit. Band I—II, München, Max Hueber, 1929—1930, S. XL + 332 + 412.

Յովհաննէս Ոսկեբերանի անձն ու անունը շատ տեսակէտներով կապուած է հայ աշխարհին եւ գրականութեան հետ: Անոր կեանքի ողբերգութեան վերջին թատերավայրն եղաւ Հայաստան, անոր թանկագին գործերէն ստուար մաս մը թարգմանուեցաւ հայերէնի, մեծագոյնը Ե· դարուն՝ ոսկեդէն մատենագրութեան շրջանին· ուստի իրաւամբ Այս Ոսկեբերան զգացուած է հայ հեղինակ: Այս բազմապատիկ կապերը միանգամայն խայծեր են, որոնք կը հրապուրեն զմեզ մերձենալու այդ մեծ անձին· որչափ լուսաւորուի անոր գործունէութեան եւ գաղափարներու պատկերը մեր աչքին առջեւ, որչափ ընդարձակուի մեր ծանօթութիւնն անոր անձնաւորութեան եւ նկարագրին հետ, այնչափ աւելի լաւ պիտի ըմբռնենք այն ազդեցութիւնը, զոր թողուցած է Ոսկեբերան հայ մատենագրութեան վրայ: Սերունդներ սնած եւ աճած են անոր գրութիւններուն լոյսին ու ջերմին տակ: Եթէ Նիկեփորոս Կալլիստոս (Պատմ. Եկեղ. ԺԳ. 2) վկայած է իր անձի մասին թէ «փոքր հասակէս սիրած եմ Ոսկեբերանը. անոր ձայնին՝ իբրեւ Աստուծոյ ձայնին ականջ դրած եմ, եւ ինչ որ գիտեմ, ինչ որ եմ, իրե՛ն կը պարտիմ», նոյնը կրնան վկայել նաեւ շատ հայ մատենագիրներ, որոնց թուին մէջ նաեւ Ներսէս Շնորհալի մը:

Այս պատճառաւ ալ օգտակար կը համարիմ ծանօթացնել համառօտիւ հայ ընթերցողներուս գործք մը, որ պիտի օժանդակէ մեզի մերձուստ ճանչնալու Յովհ. Ոսկեբերանն եւ իր ժամանակը:

Ch. Baur է անոր հեղինակը, ծանօթ արդէն իբրեւ մասնագէտ իւր ճիւղին մէջ այն բազմաթիւ գրութիւններով, որոնք նուիրուած էին Յովհ. Ոսկեբերանի կենսագրութեան, գրութիւններուն, բարոյախօսութեան եւայլն:

Առաջիկայ հատորներս անոնց ամփոփումը, յօրինուածական զասաւորութիւնն եւ ամբողջացումը կը կազմեն: Անչափ հըմտութիւնն, որ խտացած է հոն, ընթերցողին զարմանքը կը շարժէ: Պատրաստողական մասը, ուր հեղինակն գործքին ծրագիրն եւ աղբիւրները կը նշանակէ (էջ XI—XL), քննելով անոնց արժէքը, կը բովանդակէ հարուստ գրականութիւն մը Ոսկեբերանի եւ իր ժամանակի շուրջ: Այսպէս հաստատուն հողի վրայ կոխած կը մերձենայ նիւթին:

Ա. հատորին վերնագիրն է Antiochf, ուր Յովհ. Ոսկեբերան նկատի կ'առնուի իր ծննդավայրին մէջ: Անտիոքի բնութիւնը, քաղաքական կացութիւնը, եկեղեցական հանգամանքները, քաղաքակրթական պայմանները, որոնց մէջ աշխարհի լոյսը տեսաւ, սնաւ եւ զարգացաւ Ոսկեբերան, ունին իրենց նկարագրութիւնը պատշաճ չափով, գեղարուեստական ոճով, պատմական ճշտութեամբ եւ փիլսական հաճելիութեամբ: Ոչ մէկ կէտ, որ Ոսկեբերանի եւ իւր կեանքի շրջանակին կը հայի, անտես զուրս ձգուած է հոն: Կը ցցուի ամէնուն մէջէն հզօր դէմքը դիւցազնին, որ հակառակ աննպաստ ժամանակին եւ հանգամանքներուն՝ ամուր քայլերով կ'ընթանայ յառաջ, կը կազմակերպուի, երեւալու հրապարակի վրայ իբրեւ ճարտասան, իբրեւ պաշտօնեայ խորանին, ուսուցանելու, մեկնելու եւ ջատագովելու քրիստոնէական վարդապետութիւնն եւ Ս. Գիրքը: Անտիոքեան շրջանին արդէն երեւան եկաւ իբրեւ եկեղեցական քարոզիչ (էջ 166—188), իբրեւ մեկնիչ մատենագիր (էջ 234—252), իբրեւ մեկնիչ (էջ 260—272), ջատագով (էջ 278—293), բարոյագէտ (էջ 307—322), երբ յօրինեց իւր մեկնողականները՝ Եսայեայ, Մատթէի, Պաւղոսի թղթերուն:

Արդէն մեծ հռչակ հանած Անտիոքի մէջ՝

կը հրաւիրուի Ոսկեբերան՝ Կ. Պոլիս շարունակելու հոն իր գործունէութիւնն իբրեւ եպիսկոպոս:

Մայրաքաղաքի մէջ՝ արքունիքի մերձաւորութեան, ազականութեան կեդրոնը պիտի գործէր այժմ Մեծ ճարտասանը: Ժապիտի գործէր այժմ ժամանակին ու միջավայրը գեղեցիկ ներկայացուցած է Baur (Բ. էջ 23—39): Անկաշառ հովուապետը չէր կարող աչք գոցել զեղծումներուն եւ հզօր ճարտասանն որոտաց անխնայ արքունիքին եւ ժողովուրդին դէմ: Ցասումը աքսորի մը, այս իբր հետեւանքը եղաւ...

Սեպտ. 14ին: Ցուցիչ են հեղինակին նկարագրութիւններն այս գլուխներու մէջ:

Մատեանը կը փակուի գլխով մը, ուր կը նկատուի «Ոսկեբերան դարերու կեանքին մէջ» (էջ 390—397): Հոս կը խօսի հեղինակը Մ. Խորենացւոյ յառաջ բերած մէկ նամակի մասին «Թուղթ Ատտիկեայ առ Սահակ», ուր Յովհաննէս արդէն «Ոսկեբերան» կ'անուանուի (Խոր. Գ. 57). «կարելի չէ, կը գրէ Baur, վաւերական նկատել զայն» (էջ 377, հմմտ. 394 ծան.): Հայոց մատենագրութեան հայող անդրադարձութիւն մըն ալ կը գտնենք (Գլ. էջ 327, ուր Գէորգ Աղեքսանդրացւոյն (ԾԹ) խօսքը կը բերուի թէ Ոսկեբերան իւր աքսորավայրէն «ամբողջ Հայաստան քրիստոնեայ ըրաւ եւ բաց սաստի պատճառ եղաւ որ Նոր Կտակարանն ու Սաղմոսները հայերէնի թարգմանուին» (հմմտ. առ այս նաեւ Յուշիկք Ա. 50—51). Baur կը ծանօթագրէ «Ս. Գրքի հայերէն թարգմանութիւնը (Սահակ մեծէ՞ն) Ե. դարու առաջին կէսէն է եւ յունարէնի վրայէն կատարուած (Մ. Խոր. Գ. 57): Ուրեմն անհնարին չէ որ հայերէն թարգմանութիւնը Յոյնի մը դրդման վրայ սկսած ըլլայ: Թէ այդ Յոյնը՝ ինքնին «յԵրկիրդ Հայս» աքսորուած Ս. Ոսկեբերան եղած է, որչափ գիտեմ՝ միայն Գէորգ Աղեքսանդրացին կը վկայէ: 404ին Մեսրոբ հայկական գիրը գտաւ. այդ թուականը հայ մատենագրութեան ծննդեան տարին կը համարուի: Հայաստան այն ատեն մասամբ պարսիկ իշխանութեան տակ էր եւ թէ Ոսկեբերան աքսորքի ժամանակ Պարսկաստանի հետ յարաբերութեան մէջ էր՝ կը տեսնենք իր նամակէն ԺԴ, 5 (ԾԲ, 618): Սակայն եւ այնպէս մը հանելու չէ այսչափս եղրակացութիւն բաներ»:

Ի հարկէ այս խուլ արձագանգ մըն է միայն այն հռչակին, զոր կը վայելէր Ոսկեբերան Հայոց մէջ:

Հետաքրքրական է դարձեալ գիտնալ որ ԺԶ. եւ ԺԷ. դարերուն եւրոպացի բանասէրներէն ոմանք Ոսկեբերանի կ'ընծայէին հայկական գրի գիւտը (հմմտ. Զարբանելեան՝ Մատենադարան, էջ 239—240): Զարբանելեան կը գրէ դարձեալ «ի Վատիկանեան Մատենադարանի որ ի Հռովմ՝ հոյակապ սրահի մը մէջ, ուր ամենայն ազգաց այբուբենից ծանօթ հնարողաց դէմքերն պատկերագրուած են, մեր այբուբենքն իրենց հին երկաթագիր ձեւերովն տրուած են ի ձեռս Ոսկեբերանի, զինքն համարելով եւ կոչելով անոնց հեղինակ (Հայկ. հին Դպրութեան պատմ. 1886, էջ 21. հմմտ. Ալիշան՝ Յուշիկք, Ա. 52):

Պիտի ուզէի ջերմապէս յանձնարարել Baurի այս աշխատութիւնն այն ամէնուն, որոնք կը տածեն Ոսկեբերանի հանդէպ սէր, կը պարապին Դ. դարու պատմութեամբ եւ կը փափագին խորապէս ըմբռնել Ոսկեբերանի հայերէն մատենագրութեան հոգին, շունչն եւ իմաստը:

* Պ. Ն.

ԾԱՂԿԵՓՈՒՆՋ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

* Նիկողայոս Եորգա (Nicolae Jorga): — Ռումանիոյ մեծ զաւակը եւ հայ Ազգին լաւագոյն բարեկամը (ծնած 5 Յունիս 1871 ի Բոտոշան), Յունիսին տօնեց իւր ծննդեան 60ամեակը:

Ն. Եորգա մին է այն գիտնականներէն, որոնք տիրացած բազմակողմանի հմտութեան՝ վաստակաւոր եղած են գիտութեան եւ այլ մարզերու մէջ յոգնաշատ արտադրութիւններով: Մասնաւորապէս Ռումանիոյ պատմութիւնն եղած է Ն. Եորգայի մասնագիտութիւնը· բայց իր հմտութիւնը նուաճած է նաեւ հեռաւոր աշխարհներ: Առանձին համակրութեամբ հետաքրքրուած է պատմութեամբ հայ ժողովրդեան, որուն հատուածները տեսած է նաեւ իր շուրջը: Ռումանիոյ պատմութեան նուիրած աշխատութիւններու մէջ յաճախ անդրադարձած է հայ-ռումանա-

© National Library of Armenia